## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1934 Սեպտեմբեր–Հոկտեմբեր Թիւ 9–10


էջ

Հայկական ճեմարան

Խմբ. — Հայ մշակոյթի պանծալի կոթողը – Աստուածաշունչի Բ. թարգմանութեան 1500 ամեակը . . . . . 321

Թորոսեան Հ. Յովհ. — Ս. Բարսեղ Կեսարացի – Իր «Վեցօրեայ» ճառերը և հայ թարգմանութիւնը . . . . . 327

Մագսուտեան Նուպար. — Արալէզները 337

Աճեմեան Հայկ. — Գրիգոր Տաթեւացիի Աւետարանը . . . . . 345

Արտաւազդ Արքեպս. — Լոնտոնի (Թաւրիզու) Թ. 66 Աւետարանը . . . 348

Քիւրտեան Յ. — Խճանկարը Հայոց մօտ (Երուսաղէմ) . . . . . 358

Լեզուագիտական

Փէչիկեան Հ. Ե. — Աշխարհաբարի հարցեր . . . . . . . 388

Գրական

Լ. Տաքին. — Աբարիսի երազը (քերթուած), թրգ. Հ. Փ. Ե. . . . 350

Վահանուղր. — Խորանիկը (քերթուած) 344

— Մատոննա . . . » . 354

— Անծանօթ մեռելներուն . » . 355

Փէչիկեան Հ. Ե. — Յայգանուագ » . 356

— Հայ գրերը . . . » . 357

Գրախօսական

Երեմեան Հ. Ս. — «Մանկական դաստիարակութիւն տան մէջ» (Լ. Պ. Գալէմքեարեան). — «Մենիկ ծառը» (Խ. Պ. Վէմեան). — «Ժառանգականութեան նորավէպը» (Ա. Յ. Ճէպէճեան). — «Արաբկիր և շրջանի գիւղերը» (Ս. Ա. Բախտիկեան) . 378

Փէչիկեան Հ. Ե. — «Ոսկի արիշին տակ». (Մեծարենցի արձակները. հրտ. Թ. Ազատեանի). . . . . . . 381

Թատրոն

Երեմեան Արամ. — Ռուսահայ թատրոնի պատմութիւնը (Նոր շրջան. 1863) . 362

Հայկական մամուլ

Փ. Հ. Ե. — Հանդէս հանդիսից . . 397

Զանազան

Խմբ. — Արեւելքն Արեւմուտքի մէջ . 391


## SOMMAIRE

1934 Septembre-Octobre numéro 9–10


p.

**Académie Arménienne**

*Réd.* — Le glorieux monument de la Culture arménienne – 1500ème de la seconde version de la Bible en arménien . 321

*Torossian P. J.* — La version arménienne des homélies «In hexaemeron» de S. Basile . . . . . . 327

*Maxoudian N.* — Les vampires (Le culte des chiens) . . . . . 337

*Adjémian H.* — L'Evangile de Grégoire de Tathève . . . . . 345

*Mgr. Ardavast.* — L'Evangile de London (Tauris) N. 66 . . . . 348

*Kurdian H.* — La Mosaïque chez les Arméniens. . . . . . 358

**Linguistique**

*Paitchikian P. E.* — Etudes sur la langue arménienne moderne . . . 388

**Littérature**

*Laurence Dakin.* — The dream of Abaris (poésie), (trad. par P. Ph. Y.) . 350

*Hovhannessian P. V.* — Le petit autel . . . . . (poésie). 344

— Madonna . . . . » . 354

— Aux morts inconnus . » . 355

*Paitchikian P. E.* – Sérénade » . 356

— Les lettres arméniennes » . 357

**Recensions**

*Erémian P. S.* — «La pédagogie dans la maison» (par L. Kalemkiarian). — «L'arbre solitaire» (par K. Vemian). — «La nouvelle héréditaire» (par U. Djébédjian). — «Arabkir et les villages de l'environ» (par U. Bakhdikian) . . 378

*Paitchikian P. E.* — «A l'ombre de la vigne dorée (*Les proses de M. Médsarents*, publiées dar T. Azadian) . 481

**Théâtre**

*Erémian Aram.* — Histoire du théâtre des Arméniens en Russie . . 362

**Chronique Arménienne**

*P. P. E.* — Revue des Revues . . 397

**Divers**

*Réd.* — «L'Orient en Occident». . 391



ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

*1935* **ՕՐԱՑՈՅՑ ԵՒ ԳՈՒՇԱԿ ՕԴՈՅ** *1935*, Փր. գ. **0,55**



ՍԵՊՏ. – ՀՈԿՏ. ԹԻՒ 9 – 10

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1934

ՀԱՏ. Ղ.Բ ՌՅՁԳ-ՌՅՁԴ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ


## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

# ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՆԾԱԼԻ ԿՈԹՈՂԸ

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԵՐԿՐՈՐԴ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԶԱՐՀԻՆԳՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

ՀԱՅ ՄՇԱԿՈ՛ՅԹ. ո՛րքան նուիրականութիւն, ո՛րքան սրբութիւն, ինչպիսի՜ մեծութիւն և փառք իր գերագոյն և աննման խորհուրդին մէջ։

Եւ ատոր համա՛ր ալ արդէն մեր ցեղական տօներուն մէջ ամէնէն վսեմը կը դառնայ ան օրէ օր, ամէնէն սրտաթունդը՝ ամէն տարի, ամէն տեղ։

Կը բռնկի հայ տաճարի սրբազան բուրվառէն՝ որով խնկուած են մեր անմահները լուսապսակ, ու հրահրուած շունչովը սուրբ սեղանի պաշտօնեաներուն, դուրս կ'ելլէ բոցավառ լեզուներով ու կը պարուրէ Հայ ազգը իր ամբողջ համայնքին մէջ՝ մինչեւ աշխարհիս հեռաւոր ու զանխուլ անկիւններն իսկ, ամբողջ Հայ ազգը՝ իր լոյսով ողողուած, իր փառքին մէջ պանծալի, իր սրբութեան երկրպագու։

Կ'անցնին իր վրայէն աշխարհաւեր մարտեր, կը խորտակուին թագեր, կը տապալին գահեր, սակայն ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹՆ իր ԳՐԻ յաղթանակով կ'ապրի Ազգին մէջ ու կ'ապրեցնէ զայն այսօր, ինչպէս երէկ, ինչպէս պիտի ապրեցնէ զայն յաւերժօրէն։

Սահակ, Մեսրոպ, Վռամշապուհ և ամբողջ լուսերամը Թարգմանիչներուն՝ որոնք անլուր կսկիծով տեսան տառապանքը մեր Ազգին, արցունքով հրահրեցին շիջելափառ հուրը մեր ցեղին, ու նուիրուեցան նահատակի անլուր ոգեւորութեամբ։

Ինչ որ հա՛յ է մեր մէջ, իր ամբողջ էութեամբ և խկութեամբ, հնութեամբ և սրբութեամբ՝ անոնց կը պարտինք։ Անոնք մահկանացու ծնած՝ անմահ թողին իրենց յիշատակը շնորհիւ ստեղծագործութեան անմահ և անմահագործ աստուածային Գրին.




digitised by A.R.A.R.@